Եկաւ և աքաղաղը. հասակը բարձր, վիզը երկար, գլխի թագը կրակի պէծ, փետուրները գոյն-գոյն ու մէրուքը կաս-կարմիր ա-քաղաղը:

Ու տեսնելով կուտ-կուտիկ՝ հաւ, աքաղաղ, ճուտ-ճուտիկ, վրա հասան ճը՛տ, ճըտ, ճը՛տ, վեր քաղեցին կը՛տ, կը՛տ, կը՛տ...

Հաւերն ի՞նչ օգուտ են տալիս:
Ուրիշ ի՞նչ ընտանի թռչուններ գիտէք:

Առած՝ներ—Գեր հաւը ձու չի ածի:
Ածան հաւը կըչկըչան կը լինի:



47. Սուլթան աքլորը

—Ծո՛ւղ-րո՛ւ-ղո՛ւ...
Ես շահ աքլորն եմ,
ես խան աքլորն եմ, սուլթան աքլորն եմ:
Իմ հաւիկները, ձվ է ածում գեղեցիկը,
քաջերի քաջը:
—Չը կայ, չը կայ, սուլթան ու խան. չը կայ, չը կայ, պայծառ շահ,
էս աշխարհում քեզ հաւասար: Դու՛ ես գեղեցիկը, դու՛ ես քաջը,—
պատասխանում են հաւերը:
—Ծո՛ւղ-րո՛ւ-ղո՛ւ...
Արծւի ձէն ձվ ունի,
ուժեղ ոտներ ձվ ունի,
գոյն-գոյն շորեր ձվ ունի:
—Մե՞ր շահի շորերն են գոյն-գոյն, ոտներն են պողպատ ու ձէնն է
զիլ-զիլ:
—Ծո՛ւղ-րո՛ւ-ղո՛ւ...
Ո՞ւմ թախտն է բարձր,
ումմ գլխին թագ կայ,
ձվ է ձեր սուլթանը, ձվ է ձեր խանը:
—Քո թախտն է բարձր, քո գլխին թագ կայ: Դու՛ ես մեր սուլթանը,
դու՛ ես մեր խանը:

Բայց... բռնեցին խանին, մորթեցին սուլթանին, փետրեցին նը-րան, եփեցին ու կերան:

Ինչ ընտանի թռչուններ գիտէք: Աքլորից ուժեղ ինչ թռչուն կայ:
Առած.—Գլուխը գովելով գլորուեց:



48. Ծիրիկ

Պսիրիկ-մսրիկ, ա՛յ ծիրիկ,
Ֆանի՞ թուչես ծառիս-ծառ,
գոնէ մի կտեղ փիչ տրիրիկ,
յոգնած թևիդ հանգիստ տուս:

Ծիտիկն ինչո՞ւ է ծառից ծառ թռչում:

49. Աբրան Հուռին

Կենում է չի լինում մի կնիկ։
Էս կնիկը մի աղջիկ է ունենում՝ անունը Հուռի։ Սա լինում է մի ծույլ աղջիկ։ Օրը մինչև իրիկուն պարապ-սարապ նստած երգում է.

—Բանն ինչ կանեմ՝ կեղտոտ է.
բամբակը՝ կորիզոտ է.
մեռաքս պիտի, որ մանեմ,
մաստակ պիտի, որ ծամեմ,
կաերը տիտիկ անեմ,
անցնողին մատիկ անեմ.
ուտեմ, խմեմ, մթնի, քնեմ։

Հարևանները անունը դնում են Աբրան Հուռի։

Ծույների վերջն ինչ է լինում:

Ա. ռ ա ծ.—Բան դրին փախաւ, հաց դրին հասաւ.

50. Ոչ որ...

—Ո՞վ կայ տանը։

—Ոչ ոք... ես եմ, պապս է, տատս է, հէրս է, մէրս է, երկու քուրս, երեք ախպէրս, երկու հարսս, հօրքուրս ու մօրքուրս. Ո՞վ կայ որ..



51. Փիսիկի գանգատը

Փիսիկը նստել
մի մութ անկիւնում,
ունքերը կիտել
ու լաց է լինում։
Մօտիկ է գալիս
մի ուրիշ կատու.
—Ինչո՞ւ ես լալիս,
այ փիսիկ ջան, դու...
— Ի՞նչ անեմ հապա,
որ լաց չը լինեմ,—
գանգատ է անում
Փիսօն տըխրադէմ։—
Էն Համօն թաքուն
մածունը կերաւ,
գընաց տատի մօտ
ինձ վըրա դրաւ։
Հիմի տատիկի
եռևից ընկած՝
ինձ են ման գալի
մի-մի փէտ առած
էն քոթոթ Սուրէնն,
Անօն ու Մօսօն։
«Ո՞ւր է,—ասում են,—
ձուր է գող Փիսօն,
ախ, թէ մի գըտանք,
մածուն ցոյց կը տանք...»
Էսպէս բան սարքեց
էն Համօն իմ դէմ.
ինչ անեմ հապա,
որ լաց չը լինեմ...
Ու Փիսօն նստել
մի մութ անկիւնում,
ունքերը կիտել
ու լաց է լինում

ԵՒա՛ւ էր արել Համօն, որ մեղադրել էր փիսօյին.

52. Փեսի բաժինը

Նանը մածուն էր մերել,
բաց պատուհանն էր դրել։
Անտէր մնայ սև կատուն՝
փեսի բաժինն էր կերել։

53. Ծիծեռնակ



Ծիծեռնակ, ծիծեռնակ,
դու գարնան սիրուն թռչնակ,
դէպի ո՞ւր, ինչ աստ,
թռչում ես այդպէս արագ:

54. Ջուխտ ու կենտ

Մայրիկը ծիրան բաժանեց երեխաներին։

—Արմիկ,—ասաւ Սօնիկը,—արի Ջուխտ ու կենտ խաղանք։ Տես-նենք ով կը տանի։

—Լաւ,—համաձայնեց Արմիկը,—առաջ ով բռնի, Քս թէ դու։

—Ես,—ասաւ Սօնիկը,—ես մեծ եմ։

Սօնիկը ձեռքը ետ տարաւ, երկուսն էլ ամուր խփեց և առաջ բերելով հարցրեց.

—Ջուխտ է թէ կենտ։

—Կենտ,—ասաւ Արմիկը և բռնեց Սօնիկի ձեռքը։—Բայց արա, տեսնենք կենտ է թէ ջուխտ։ Յիշիր այ, ես կենտ եմ ասել։

Սօնիկը բաց արեց ձեռքը, տեսան որ երեք հատ ծիրան կայ մէկի մէջ։

—Օ՜ճճ... կենտ է, կենտ,—ուրախացաւ Արմիկը,—տուր ինձ ծի-րանները։

—Ոչ, կենտ չի Արմիկ,—ասաւ Սօնիկը,—այս երեք ծիրանը՝ երեք էլ կորիզ կայ, կանի վեց։ Վեցը ջուխտ է, դու պէտք է տաս ինձ երեք ծիրան։

—Չէ, Սօնիկ, այս երեք ծիրանը երեք կորիզ ունի, որ կանի վեց, բայց երեք կորիզն էլ երեք միջուկ ունի, որ կանի իննը։ Տես, էլի կենտ է, դու պէտք է տաս ծիրանները։

Սօնիկը տեսաւ, որ ոչ մի կերպ չի կարողանում ազատուել Ար-միկից, ծիրանները տուեց նրան։

Ո՞վ էր երկուսից աւելի հնարագէտ։

55. Քնած են



— Շուշան, արի թռչնոցը գցենք գոմը ու ճու-տերը մէկ-մէկ լողացնենք,—ասաւ քոյրիկը։

—Լաւ, արի լողացնենք։

Թռչնոցը մի կերպ գոմը գցեցին, տաշ-տակը ջրով լցրին, ճուտերը մէկ մէկ բըռ-նեցին, ջրի մէջ խեղդեցին ու պառկեցրին չալի տակ։

Դուրս եկան բակը, տեսան մայրիկը հանդիցը գալիս է։

—Մայրիկ ջան, գիտե՞ս ինչ ենք արել, ճուտերը լողացրել ենք, տեղ շինել ու քը-նացրել, հէնց խելօք քնած էն, իսկի լաց չեն լինում,—ասաւ Շուշանը ու փաթաթուեց մօրը։

—Ի՞նչ, ի՞նչ, չը լինի՞ թէ խեղդոտել էք...

—Չէ, չէ, մայրիկ ջան, տես, չալի տակ քնած են։

Լաւ արին նրանք։

56. Մեր վարիկը



—Կը՛-կը՛, կը՛-կը՛, կրաք-կը՛ կը-կը՛...
Ջու էր ածել մեր վարիկը. —
Ձու էր ածել,
հպարտացել,
Կըրմըշտուրիկ էն հաւիկը։

Կը՛-կը՛, կը՛-կը՛, կրաք-կա՛, կրաք-կա՛...
Էս ո՛ւր է, ո՛ւր, ձուս էլ չը կայ,

կըրկըռում էր, քըչքչում էր
քըչքըրում էր, ու կանչում էր.
բնատեղը չալթևիկը... —Էս ո՛ւր է, ո՛ւր իմ ձւիկը...

Ինչու էր անհանգիստ չալ վարիկը։

Հանելուկ.—Էն ինչ տուն է, դրսից արծաթ է, ներսից ոսկի։

57. Մայրը



Երէն հեռուց խարաւին կոկոցում է անդադար.
_Կրնակ-կա՛, կրնակ-կա՛: Էն կախաւն է կարդում
կանչակ թխուկում._Կրնակ-կա՛, կրնակ-կա՛...

Չրկան ճուկերը: Ոնվ գարաւ, ոնվ կերաւ.. որդ-
նում է և գիւղ կարդում._Կրնակ-կա՛, կրնակ-կա՛...

Կաքաւն ի՞նչպիսի տեղ է քուն շինում:
Կաքաւն ինչո՞ւ էր լալիս:

58. Ոսկէ ձուկ

Պապի,
Տատի
Չալ հաւիկ
Աձեց ոսկի
Մի ձուկ:
Տուր որ ուտեց
Պապիկը,
Բայց չը ջարդեց
Ձուկը:
Տուր որ ուտեց
Տատիկը,
Բայց չը ջարդեց
Ձուկը:

—

Մին էլ վազեց
Մկնիկը,
Պոչահարեց
Ձուկը:
Ձուկն ընկաւ
Կոտրւեց:
Լաց է լալիս
Պապիկը,
Լաց է լալիս
Տատիկը
Ու կըռկըռում
Հաւիկը.
—Մի լար, պապիկ,
Մի լար, տատիկ,
Նորից կածեմ
Ես մի ձուկ,
Ձուկ, ձուկ,
Ձուկուկն,
Էլ չի լինի
Ոսկեղէն:

59. Զուչիկը



Առաւօտը նոր էինք վեր կացել, ծառան յայտնեց, թէ գողերը մեր աքաղաղն ու հաւերը տարել են:

Վազեցինք տեսանք հաւանոցը դատարկ է:

Դուրս եկանք փողոց, զարպասի առաջ կանգնեցինք մեր փոքրիկ շան՝ Զուչիկի հետ: Յանկարծ Զուչիկը գետինը հոտոտեց, նայեց դէս ու դէն և վազեց: Մենք էլ ընկանք նրա յետևից: Զուչիկը կանգնեց մի դառն առաջ և բարձր-բարձր հաչեց: Մէկ էլ՝ դառն յետևից լսեցին մեր աքաղաղի ուրախ ծուղրուղուն և հաւերի կըչկըչոցը:

— Գոհանք, գոհանք, ուրախացանք մենք և կանչեցինք ծառային: Ծառան եկաւ, դուռը բացեց...Հաւերն ու աքաղաղը բանտից դուրս թռան: Զուչիկը պոչը դրօշակի պէս բարձր բռնած՝ հետևում էր նրանց:

Ինչո՞ւ են մարդիկ շուն պահում:
Էլ ի՞նչ գիտէք շների մասին:

Ա ա ա ծ.—Շունն իր տիրոջ վրա չի հաչիլ:

60. Լուսին

Լուսինն ելաւ էն սարից,
սարի բարձր կատարից,
շէկլիկ-մէկլիկ երեսով
փռեց գետնին լուսի ծով.—
—Ջան, այ լուսին,
շէկլիկ լուսին,
Ջան քո կլոր
շէկ երեսին:

Խաւարն իսկոյն չքացաւ
ու էլ գետնին չը կացաւ,
լուսնի լուսից հալածւած՝
խոր ձորերի մէջ ճնաց.—
—Ջան,այ լուսին,
Ջան, քո լուսին,
Ջան քո արծաթ
կամար ուսին:

Ե՞րբ է լուսին լինում:

Հ ա ն ե լ ո ւ կ.—Էն ինչն է՝ մեր կտերը մի կոտրած տեփուր է ընկած:

61. Չիաւորներ

Շէկլիկ Իսակը, Բկլիկ Սիսակը ու Բոբիկ Միսակը ձի-ձի էին խաղում։ Իսակը հեծել էր պապի ձեռնափայտը, Սիսակը մի թիու կոթ, իսկ Միսակը՝ մի երկար ձող։

— Ի՛, ի՛, հի՛, հի՛, հի՛... խրխնջում էր Իսակի քուռակը։

— Փը՛ռռռ. հը՛ռ, հը՛ռ, հը՛ռ... փռնչում էր Սիսակի ձին։

— Սը՛սսս, ձերմակ Ջան, սը՛սսս...փաղաքշում էր Միսակն իր վազանին։



— Մէկ, երկու, երեք՝—հէնց որ նշան արաւ Կարճիկ Յաչիկը, ձիաւորները միասին ասին.—

Ով ադաք, ադաք՝
նա հասնի քաղաք.
ով յետի, յետի՝
նրա ձին փէտի։

Աչին ու պռկի, քշեցին իրենց ձիաները...Ինչպէս էին վազում։

Էլ ինչ խաղեր գիտէք։

Հ ա ն ե լ ո ւ կ.—Գաւիկ տղան վազվում՝ մէջքի գօտին քաոսուն գազ։

62. Անձրեւ

— Էհ, մայրիկ, անձրեւ է գալիս,
էլ ինչպէս գնանք զբօսնելու։
— Սպասիր, բալիկս, էդ ոսկի է,
ոսկի, երկինքն է տալիս։
— Իսկի էլ ոսկի չէ... չենք կա-
րողանում խաղալ, ինչի է պէտք.
— Ինչի է պէ՞տք... կաց ասեմ։
բալիկս, ասեմ, իմացի.—
— Հացը դաշտումը ծլել է, ծաղ-
կել, ցօղուն արձակել, անձրեւ է
պէտք նրան, որ աճի։
Ծառերը ծաղկել, տերև են տւել,
անձրեւ կուզեն, որ չը չորանան։
Սար ու ձոր կանաչել, խոտերն
են աճել՝ անձրեւ է պէտք նրանց։
Առանց անձրեւի ոչ ոք կեանք
չունի, նա կեանք է նախշում,
նա կեանք է բախշում։

Ա. ռ ա ծ.—Վատ օրը կը լաւանայ, վատ մարդը չի լաւանայ։

63. Հերոսը

—Միգրան, ինչպէս եղաւ, որ դուն փեսդ կեայ։
—Զեռերս ապար չէին։
—Ինչ կար չեռիդ։
—Մի չեռիս փարար, մեւս չեռիս մրրակ։ Թէ չեռերս ապար կըլինէին, ես նրան կեայ կրնայի,—հպարտացաւ հերոս Միգրանը։

Ինչպիսի տղայ էր Միգրանը։

64. Բիւրեղ

Բիւրեղ, Բիւրեղ, բուբաստան,
մի քոյր ունեմ Հնդստան,
շիլա շապիկ կարող է,
մանր ուլունք շարող է։
Քոյրս գնաց բանջարի,
բանջար չեղաւ, խոտ եղաւ,
խոտի տակին ծիտ եղաւ։
Ծիտը թռաւ գերանին՝
կանաչ խոտը բերանին...
Աւետարան ուխտ գնաց,
Բիւրեղի հետ չուխտ գնաց։

Ինչ բոյսեր գիտէք։

Հ ա ն ե լ ո ւ կ.—Երկու ախպէր ուխտ գնացին՝
հէնց իմացայ չուխտ գնացին։

65. Ծիտիկների կռիվը

I

—Ծլե—վլե,
ծլե-վլե,
ծիտիկները հիւր են եկել
մեր պարտէզ,
Հիւր են եկել, հազար բարև
բերել մեզ։
—Ծլե-վլե,
ծլե-վլե,
ծլվլում են, թրովրում են
ծառից ծառ,
Թրովրում են, թռչկոտում
են անդադար։
—Ծիւ—ծիւ,
ծիւ—ծիւ...
Ծիւիկն ասաւ.—
—Էս թառն իմն է,
էս ծառն իմն է,
ես եմ տնկել ինձ համար։
—Չէ-չէ...
չէ-չէ...
Չիւիկն ասաւ.
—Ես եմ տնկել
ու հիւր եկել,
որ քէֆ անեմ էս ամառ։
—Ցեւ-ցեւ,
ցեւ-ցեւ...
Սևիկն ասաւ.—
—Գնա, կորի,
էս սալորի
տէրը ես եմ, դու ո՞վ ես։
—Տեւ-տեւ,
տեւ-տեւ,
Թևիկն ասաւ,—
—Ինչ ես եկել,
աչքդ տնկել
ու վնթվնթում քեզ ու քեզ։

II

Ծիւիկն ասաւ,
Չիւիկն ասաւ,
մի կողմից էլ
Սևիկն ասաւ.
Թևիկն ասաւ...
Ասին, ասին,
խիստ բարկացան,
իրար անցան։
Մէջերն ընկաւ կռիւը,
աշխարհ կալաւ ծիւ-ծիւը.
մէկմէկու գղեցին,
ու իրար կողք բզեցին,
ծառից իջան
կատուրը,
կորից ընկան տան դուռը,
փըռփըռացրին պոչ ու թև,
մէկ տակ իջան, մէկ վերև։
Ծիւ-ծիւ,
ճիւ-ճիւ...
ծլվլացին, թրովրացին,
մէկ էլ յանկարծ
ելան ձեռաց
բաժանուեցին, գնացին։
Ծիւիկն ելաւ սալորին՝
խէթ-խէթ նայեց բոլորին.
Չիւիկն ելաւ ծառի ճիւղ՝
դէս-դէն նայեց աներկիւղ.
իսկ Թևիկն ու Սևիկը
թռան, տեղից վերացան՝
մեր պարտիզից հեռացան։

Ո՞վ է տեսել ծիտիկների կռիվը։



66. Գառնուկ

Հայրս ինձ համար մի սև գառնուկ էր գնել։ Գեղեցիկ էր նա, դունչը սիրուն։ Մի զոյգ փոքրիկ եղջիւրներ ունէր, ես ամեն օր նրանց ճարպ էի քսում, որ փայլեն։

Ես այնքան սիրեցի այդ գառնուկին, որ պիշերները չէի ուզում բաժանուել նրանից։ Ամեն օր տանում էի արածացնելու։ Անունը դրել էի Էէյլի։ Նա վազում էր յետևիցս, լիզում էր ձեռներս ու դունչը դնում ծնկներիս վրա, երեսիս նայում։

Շաբաթը երկու անգամ սապնով լողացնում էի նրան։ Նրա եղջիւրները մեծանում էին և կամաց կամաց ծռւում։ Ես մտածում էի թէ նա ինչպէս մի օր դոչ դարձած պիտի կռւի ուրիշ դոչերի հետ ու յաղթի նրանց։

Ո՞վ է գառնուկ մեծացրել եւ ի՞նչպէս։

Ա ո ա ծ.—Աստծու պահած գառը՝ գայլը չի ուտի.



67. Նապաստակը

Նապաստակը տեսաւ աղւէսին ու մին էլ էնպէս գունդ ու կծիկ ինց է փախչում, ինց է փախչում... աղւէսն էլ նրա յետևից ինց է ձգւել, ինց է լարւել։

Աղւէսը տեսաւ, որ նապաստակին հասնողը չէ, ձայն տւեց.

—Ա՛յ ղպիկ, ա՛յ մոխրիկ, լաւն էն է կանգնես, ինձ չը չարչարես, միևնոյն է՝ կը հասնեմ քեզ։

—Ա՛յ ուստա աղւէս,—ասաւ նապաստակը,—հասնելդ ու չը հասնելդ չը գիտեմ, բայց լսեմ ու կանգնեմ՝ բաց աչքով էդ չես տեսնի։

Ո՞նչ արագավազ կենդանիները գիտէք։

Ա ո ա ծ.—Աղւէսի դունչը խաղողին չը հասաւ, ասաւ խակ է։

68. Ֆախարակ



Ֆլյվրար, ֆլյվրար ֆախարակ.
Ես հագր մանեմ. դու բարակ.
Ես մեղր ուտեմ. դու կարագ.
Ցար մանողին չալ շապիկ,
Իսկ մանողին ալ շապիկ.

Թվից ինչ են շինում:

69. Ճնճղուկն ու դեղձանիկները

—Ծիւ, ծիւ, ճիւ, ճիւ...ճնճղուկ էր, վանդակ չը տեսած ճնճղուկ:

Կանգնել էր ձողի ծայրին ու նայում էր վանդակին: Երկու թռչուն կային այնտեղ, դեղձանիկներ էին նրանք:

Ինչպես կծկւել, կպել էին իրար... կերակուր էլ ունէին:

—Ծիւ, ծիւ, ծիւ,—ճնճղուկն եկաւ, նստեց վանդակի վրա:

—Բարև, ազնիւ թռչուններ, ինչո՞ւ էք կծկւել: Այդ ի՞նչ լաւ կերակուր ունէք...

Դեղձանիկները վեր նայեցին.

—Մենք կուշտ ենք, կուզես եկ, կեր:

—Շնորհակալ եմ,—ծիծաղեց ճնճղուկը,—երբեք չէի ցանկանայ վանդակը մանել կաի համար:

1. Դեղձանիկներին ինչո՞ւ էին փակել վանդակում:
2. Ճնճղուկն ինչո՞ւ վանդակ չը մտաւ:

70. Հայրիկի պէս

Կառապան Օհանը ամեն առաւօտ լծում էր կառքը և ձիաներին տանում.—

—Գնանք, Թուչնիկ Ջան, գնանք, Բազիկ Ջան, գնանք փող աշխատենք, որ մեր Շողիկի, Գուրգէնի ու Կիկոսի համար հաց առնեմ, ձեզ համար էլ գարի:

Ճամբայ էր ու քշում դէպի փողոց:

Ձիաները զուրնները թափահարում էին, փռնչացնում ու վազում:

Շողիկը, Գուրգէնն ու Կիկոսը՝ հայրիկի գնալուց յետոյ, դուրս էին գալիս բակը ու կառք էին խաղում: Նրանց հետ էր լինում իրենց փոքրիկ շունը՝ Ցիրօն:



Գուրգէնը լծւում էր կառքին՝ փոքրիկ Կիկոսի հետ, իսկ Շողիկը մարակով քշում էր նրանց ու ասում հայրիկի պէս:

—Գնանք, Թուչնիկ Ջան, գնանք, Բազիկ Ջան, գնանք փող աշխատենք, որ մեր Շողիկի, Գուրգէնի ու Կիկոսի համար հաց առնեմ, ձեզ համար էլ գարի:

—Է՛, Շողիկ, լաւ կառապան չես,—ասում էր Գուրգէնը,—գնանք փող աշխատենք, որ մեր հայրիկի ու մայրիկի համար միրք առնենք:

—Չէ, Շողիկ, չէ, Գուրգէն,—ասում էր փոքրիկ Կիկոսը,—գնանք փող աշխատենք, որ մեր Ցիրօի համար միս առնենք:

Ո՛ր երեխայի ուզածն էր լաւ:

71. Մեր Սեւուկը

Մեր սև կատուին ճանաչում էր ամբողջ թաղը։ Կատուներ շատ կային մեր թաղում, բայց մեր Սեւուկը մի հատ էր։ Սև, բոլորովին սև, աչքերը դեղին, մազը թաւիշ, պոպոշն, ինքը սիրուն ու կլորիկ...

Երեկոյեան, երբ հայրս ծալապատիկ նստում էր ու կար անում։ Սեւուկը կամաց-կամաց մօտենում էր նրան և բարակ ու ցած ձայնով մլաւում։

—Մարիամ, հաց բեր, Սեւուկը քաղցած է,—ասում էր հայրս։

Սփռոցը բացւում էր, մենք նստում էինք նրա շուրջը, Սեւուկն էլ նստում էր հօրս ծնկանը։

— Ուտենք, կատու, Աստծու ուտածը,—ասում էր հայրս։

Ինչո՞ւ էին սիրում Սեւուկին։

72. Արեւ

Արև, արև, արեգակ,
աշխարհն առած թևիդ տակ,
ամբողջ տարին երկնքում
ման ես գալիս շարունակ։

73. Սիրուն թռչուններ...

Սիրուն թռչուններ,
Ինձնից մի վախեք,
Նստեցեք ծառին՝
Անուշ գեղգեղեք։

Թակարդ չեմ դնի
Դաշտում, պարտիզում,
Ազատ ապրեցեք,
Ձեր երգն եմ ուզում։

Ո՞վքեր են թակարդով թռչունները որսում և ինչո՞ւ։

Հանելուկ.—Մի կտոր փայտ ունեմ՝ սղոց չի տեսել,
Մի տոպրակ ալիւր ունեմ՝ ջաղաց չի տեսել,
Մի արշին աւլաս ունեմ՝ գործող չի տեսել։

74. Երբ է լինում



Դպրոցը մերկանում,
օրը կարճանում,
ցամին է խաղում,
անձրևը մաղում։
Սոյդ երբ է լինում։

Հանելուկ.—Ձորս եղբայը մի գլխարկ ունեն։

75. Սրամիտ Եւան

—Հայրիկ, տասը մատդ էնպէս համարիր, որ տասնըմէկ լինի,—ասաւ Եւան։

—Տասնըմէկ...էս բոպէիս.—մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթ, ութ...տասը, տասնըմէկ։

—Չեղաւ, չեղաւ, հայրիկ, ինձը թողիր,—նկատեց Եւան։

—Ապա ի՞նչպէս, Եւա։

—Մէյ ասեմ.—մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթ, ութ, ինձը, տասը։ Տաան էր, չէ՞։

—Այո՛, բայց ոչ տասնըմէկը։

—Սպասիր է, ասեմ. հիմա յետ համարենք.—տասը, ինձը, ութ, եօթ վեց։ Էս վեց, հայրիկ, էս ձեռքս էլ հինգ մատ ունի, վեցին աւելացնենք հինգ՝ կը լինի տասնըմէկ։ Եղաւ, հայրիկ,—ասաւ Եւան ու ծիծաղելով դուրս վազեց։

Դուք ի՞նչ գիտէք այս խաղի նման։

Առած.—Պատիկ է ու չսարկ է։



76. Շաւարշի վարպետը

Շաւարշը դերձակի աշակերտ էր։ Երեք տարուց յետոյ հայրը եկաւ քաղաք՝ որդուն տեսնելու։

—Ի՞նչ ես սովորել, այ որդի,—հարցրեց հայրը։

—Օ՛, հայրիկ, էլ մի հարցնի, արհեստի կէսը սովորել եմ, արդէն գիտեմ տեղը թելել, ճուտմ է, որ կարելը սովորեմ,—պատասխանեց Շաւարշը։

—Չէ, Շաւարշ, էլ չեմ կարող սպասել, ես մեղք եմ, օգնական չունեմ, արի տանեմ կօշկակարի տամ, կօշիկ կարել սովորի։

Միւս օրը Շաւարշը կօշկակարի աշակերտ էր։

Նա ուշադրութեամբ հետեւում էր վարպետի բոլոր գործերին և տեսնում էր, որ միշտ մինոյն բանն է անում նա։

Մի շաբաթից յետոյ Շաւարշն ասաւ հօրը։

—Հայրիկ, ես արդէն վարպետ եմ, արդէն գիտեմ կօշիկ կարելու համար ինչ պէտք է իմանալ.—Պէտք է ոտքի չափը առնել, կաշին թրջել, կաղապարի վրա քաշել, բզով ծակել, մեխ խփել և կօշիկը արդէն պատրաստ է...

—Ապրես, Շաւարշ ջան, ինչ լաւ բան է, ինձ էլ սովորեցրիր քո վարպետութիւնը,—ասաւ հայրը։

Ինչպէս տղայ էր Շաւարշը։

77. Ծիտիկն ու մուկիկը

Ծիտիկն ու մուկիկը ախպերացան։ Գետի ափին բուն շինեցին, մտան մէջը։

Մի օր ծիտը գնաց քուջուջ անելու, յետ եկաւ, տեսաւ մուկիկը մեռել է։ Ծնկանը զարկեց, հօթը ճամբի մէջտեղը նստեց, հողը փորեց, տաւ գլխին ու ասաւ.—

—Վայ, ախպէր ջան, վայ։
Ջէնի վրա լորիկն եկաւ.
—Ծիտիկ-միտիկ, չալ-փետուրիկ,
հողն ինչո՞ւ ես տալիս գլխիդ։
—Թաո՛ւ, թաո՛ւ,—ասաւ ծիտը,—
ես որ չը տամ, ո՞վ տայ հապա։
Մուկիկի պէս ախպէր մեռաւ,
աշխարհքն էսպէս ճնաց անտէր,
ես որ հողը տամ իմ գլխին
մեծ բան է...

Հանելուկ.—Ին ինչն է—չորս ոտը հողին, կրկուսը կողին։

78. Փայտփորը *)

Ահա եղևնին
և վրան փայտփոր.
Նա անկոչ հիւր է.
ծառին ամեն օր
կտցով է տալիս,
պտոյտ է գալիս։
Մի բեհլի բզեզ,
կամ մի բան էսպէս՝
կտցին է գալիս,
բկին է տալիս։



Փայտփորը իրեպէսի թռչուն է։

*) Ծառածակիկ-ծառակուտակուտ։

79. Աներևը

Դեղնած փերև է. ծառից է ընկել, խոսին ձ պրկել, ուրի փակ չգել։

Սիլէր վերևն է թև չունի թռչի. իր ծառին կպչի, ուրի փակ ընկած անհնար պիտ կորչի։

Ե՞րբ են դեղնում տերևները։

Ա ա ա ծ.—Ծառի տերևը իր տակը կը կաթի։

80. Քաղցածը

—Վայ, քոռանայ Սահակի մէրը, կերաւ մի դաստա հաց, մի եզան պուխ, մի մաթրաթ մածուն, քաղցած գնաց նախիրը...

Վայ, Չանս դուրս գայ քեզ համար, Սահակ Չան...

81. Աշխատանք

Մենք, երեխէք, օրերով, մէջքով աղիւս կրեցինք. մեր կոշտացած, ձեռքերով պատ ու պատնէշ շարեցինք։

Մենք էլ կացնով, երեխէք, ձող ու գերան կտրեցինք ու ձեզ համար ապահով խրճիթ ու տուն շինեցինք։

Մենք էլ դաշտը արօրով ակօս-ակօս վարեցինք, ոսկի ցորեն ու գարի բուռը-բուռը ցանեցինք։

Եկէք դուք էլ, երեխէք, աշխատանքը սիրեցէք, ու ճակատի քրտինքով ձեր ապրուստը ճարեցէք։

Ա ա ա ծ.—Ով աշխատի՝ նա կուտի։



82. Որբ գոճիները

Ցուրտ էր։ Ճուխին, Տուխին ու Պնչօն, որբ գոճիները, պառկել էին կողք-կողքի աւած ու քնել։

—Վախ, վախ, վախ...էս ինչ ցուրտ է,—գարմնեց Ճուխին, եկաւ մտաւ Տուխինի ու Պնչօի արանքը, տաքացաւ ու քնեց։

—Վախ, վախ, վախ...էս ինչ ցուրտ է,—գարմնեց Տուխին, եկաւ մտաւ Ճուխինի ու Պնչօի արանքը, տաքացաւ ու քնեց։

—Վախ, վախ, վախ... էս ինչ ցուրտ է,—գարմնեց Պնչօն, գնաց մտաւ Ճուխինի ու Տուխինի արանքը, տաքացաւ ու քնեց։

Եւ այսպէս խեղճ գոճիները ցրտից հանգիստ քուն չունէին. գարմնում էին շարունակ մէկ-մէկու արանքը մտնում։

Տանտէրը տեսաւ, խղճաց և ծածկեց նրանց։

Գոճիները տաքացան ու մուշ-մուշ քնեցին։

Ի՞նչ օգուտ են տալիս խոզերը։

Հանելուկ.—Պապս պառկել է, քառասուն կարպետը վրան, էլի ասում է՝ մրսում եմ։

83. Խոզը

— Խոզուկ, որտեղ էիր։

—Մանուկ աղենց բակում։

—Ի՞նչ կար, ի՞նչ չը կար։

—Էհ, նա էլ մի տեղ չէր. ոչ կարգ կար, ոչ կանոն։ Ամեն ինչ մաքուր, իստակ, իւղ թափէիր՝ կը հաւաքւէր։ Մինչև անգամ՝ աղբանոց էլ չը կար, քանդւած էնպէս բակը... Ա՛յ ինչ եմ ասել կամուրջի տակը...

Խոզին ինչու Մանուկ աղենց բակը դուր չեկաւ։
Ինչու է դուր գալիս կամուրջի տակը

Ա ա ա ծ.—Էշն ինչ պիտէ նուշն ինչ է։

84. Հոգսի աղէսը

Աղէսը կախաւ էր բռնել. յանկարծ գնաւ մի մուկ. սած դրեց կախարը ու ընկաւ մկան ետևից։ կախարը թռաւ, մուկը մրաւ իր բունը։ Աղէ- ար մնաց բերանը բաց.

Աղէսն ինչպիսի կենդանի է։

Ա ռ ա ջ.—Գայլի անունն է ելել, աղէսն աշխարհ քանդեց։

85. Քեզ էլ չի վնաս...

ա.

Լինում է չի լինում մի Խաթուն-Կատու է լինում և մի Էձիկ-Պէձիկ է լինում։ Մի օր սրանք փախչում են տանից ու անտառում պատահում են Արջիկ-Կարճիկին։

– Խաթուն-Կատու, Էձիկ-Պէձիկ, ո՞ւր էք գնում,—հարցնում է Արջիկ-Կարճիկը։

—Պապի, մենք գնում ենք աշխարհ տեսնելու, չե՞ս գայ մեզ հետ,— վախվխելով պատասխանում են Խաթուն-Կատուն ու Էձիկ-Պէձիկը։

Արջիկ-Կարճիկը մտածում է, մտածում ու ասում.—

—Կը գամ, չը գամ ի՞նչ անեմ, անտառի խորքում թաթս լիզե- լով հոգիս դուրս եկաւ։ Գալը՝ գամ... բայց ի՞նչպէս տպրենք։

—Դու էլ բան ես ասում, Արջիկ-Պապիկ, քաղաքից քաղաք ման կը գանք, փողոցները կը շրջենք ու մարդկանց կուրախացնենք։

—Ի՞նչպէս կուրախացնենք,—հարցնում է Արջիկ-Կարճիկը։

—Արջիկ-Պապիկ, դու սաղ կածես, Խաթուն-Կատուն դափ կը խփի, ես էլ պար կը գամ,— պատասխանում է Էձիկ-Պէձիկը։

– Էհ, լաւ էք ասում, գնանք, մարդկանց ուրախացնենք,—ասում է Արջիկ-Կարճիկը։

Ու երեքով ճամփա են ընկնում գնում։

բ.

Գնում են, գնում, հասնում մի քաղաք։ Արջի համար մի սաղ են առնում, կատուի համար մի դափ, գալիս են ու քաղաքի հրապա- րակում կանգնում։ Արջիկ-Կարճիկը սաղն է լարում, Խաթուն-Կա- տուն դափը զլում, Էձիկ-Էձիկի են տալիս, նւագում են ու երգում։—

—Ծընգըլ-մընգըլ, սաղ կածենք, Դիփպի-դաւուր, դափ կանենք,
Դէ դափ տուէք, դափ տո՛ւ դու, Մեր էձիկին պար կածենք...

Էձիկ-Պէձիկը կանգնում է յետի ոտների վրա, վիզը ձգում է, մէրուքը ցցում, շորոր-մորոր պար է գալիս լեզուին է տալիս մկմկում, ոտին է տալիս՝ անկանկում, ծուլի-ծուլի վեր թռչում, երկու թաթը դէմ անում, որին հասնում՝ էսպէս ասում.—

—Արջիկ պապին տանձ տուէք, Խաթուն-կատուին դանձ տուէք,
Երգիչներիս հաց տուէք, Ձեր շնորհքը շանց տուէք...

Մարդիկ ծիծաղից թուլանում են, որը տանձ է տալիս, որը գանձ՝ մի կոպէկ, երկու կոպէկ...էսպէս նրանք շրջում են փողոցէ փողոց, բակից բակ։ Ուրախ էին և կուշտ, գրպաններումն էլ փող ունէին։ Արջիկ-Կարճիկը դառնում է նրանց գանձապահը։

գ.

Անցնում է մի աւ ժամանակ։ Արջը տեսնում է, որ շատ փող է հաւաքւել, միտքը փոխում է։—էլ ինչ բաժին տամ ընկերներիս, ասում է ինքն իրան,—էս փողով հազիւ ես կապրեմ, նրանք փողն ի՞նչ են անում։ Ու մի օր էլ ասում է ընկերներին.—

—Ես ման գալուց յոգնեցի, ինձ հանգիստ թողէք, գնացէք ձեր բանին...

—Դէ փողը բեր կիսենք,—ասում են ընկերները։

—Ի՞նչ փող,—գայրանում է արջը ու աստմները ցոյց տալիս...

—Ա՛մօ՛թ քեզ, Արջիկ-Կարճիկ, համ տանձը կերար, համ գանձը... էդ փողը քեզ էլ չի մնայ,—ասում են ու փախչում։ Խաթուն-Կա- տուն գնում է տուն՝ մուկ որսալու, Էձիկ-Պէձիկը՝ դաշտ արածելու։

Արջն էս փողերով քէֆ է անում մի օր, երկու օր, մէկ էլ տես- նում է, որ էլ փող չը կայ։ Նա էլ գնում է անտառը, կողքի վրա ընկ- նում ու նորից թաթը լիզում։ Իր արած վատութիւնը ճնում է իրան։

Ինչո՞ւ երկար չը տեւեց սրանց ընկերութիւնը։

86. Խորամանկ աղուէսը

Լինում է չի լինում մի աղվես։ Մի օր էս աղուէսը տեսնում է, որ գետի ափին մի հարս լացք է անում։ Ծածուկ մօտենում է, որ նրա պաշարը գողանայ, տանի անուշ անի։ Մօտենում է, հարսի կապոցը գողանում է ու փախչում։

Գնում է, մի ծառի տակ կապոցը բաց է անում և ինչ տեսնի, փայլուն ոսկիներ... Աղուէսը ուրախանում է, ոսկիները կապում է պոչին, վեր է թռչում, պոչն է պատում ու խաղ կանչում.—

—Աման, ամա՛ն, ա՛յ աման,
ոսկի գաւազ ու բերի
ով կայ, ով կայ ինձ նման,
իմ պոչիցը քաշ արի։
տեսէք, տեսէք ինչ արի,
Դէ, պոչիկ ջան, գնգռնգա,
ես գնացի պաշարի,
թող հարսն էնտեղ թնգթնգայ...

Աղուէսն էսպէս առաջ, ետ, խաղ է անում պոչի հետ։ Մէկ էլ մի գայլ մոտի հետ, կուճին անմազ, վիզը փէշ, գալիս է ու ասում.—

Ա՛յ աղուէս, ով է տուել ոսկին քեզ։ Աղուէսը պատասխանում է.—

—Գելիկ-փելիկ, գել բիձա,
Գայլն ասում է.—
լիճը ուեց ինձ ընծայ։
—Որ էդպէս է,
Կուզես, գնանք, գել բիձա,
այ աղուէս,
ասեմ, քեզ էլ ընծայ տայ...
հեծի վրէս, տանեմ քեզ։

Խորամանկ աղուէսը հեծնում է գայլին, ու քշում դէպի լիճը։ Ճամփին խրատում է թէ՝ պոչդ կը գնես ջրի մէջ, մինչև առաւօտ կսպասես, ես կը գամ, պոչդ կը հանենք ջրից ոսկիներով զարդարուած։

Այսպէս հեծած գայլ բիձին՝ գալիս հասնում են լճին։ Գայլը կըկըզում է ջրում ու պոչը ջրի մէջ գնում։ Աղուէսը թողնում է, գնում։

Մի ցուրտ օր էր յունուարի,
լիճը կպել էր պոչից։
գիշերն եղաւ մի տարի...
Օրը բացուեց, լուսացաւ,
ջուրը սառեց, հուպ եկաւ,
ուստէն քնից վեր կացաւ,
գայլի պոչը պինդ կպաւ...
եկաւ, ասաւ գայլ-բիձին,
երկինք, գետինք ճկճկաց,
որ կպել էր սառուցին.—
գայլը ցրտից ծռմռնգաց։
—Դէ, կռնճկռնճա, կռնճկռնճա,
Տեսաւ ինքը կը սառչի,
խելքի պուտուկ, գել բիձա,
պոչը քաշեց, որ պախչի։..
ով է լսել իր օրում,
բայց որտեղից... էն լճից...
ոսկի ման գան ջրերում...

87. Աթօն ու Թաթօն

Աղքատ է Աթօն, աղքատ է Թաթօն։
Աթօն ունի մի տուն երեխէք, Թաթօն ունի մի տուն երեխէք։
Կաթն են ուզում Աթօի տանը, կաթն են ուզում Թաթօի տանը։
Կաթն են ուզում՝ կաթ չի տալիս Աթօի կովը. կաթն են ուզում՝ կաթ չի տալիս Թաթօի կովը։

— Ինչո՞ւ կաթ չեն տալիս կովերը։

— Կեր չեն ուտում։

— Ինչո՞ւ կեր չեն ուտում։



—Խոտ չը կայ։

Լալիս է Աթօն, լալիս է Թաթօն։
Լալիս է Աթօն ու ասում.—
—Լա՛ւ, որ գնամ խոտ հնձեմ, բա ինչո՞վ բերեմ. սայլ չունեմ, ձի չունեմ, մենակ մի հատ ունեմ։
Լալիս է Թաթօն ու ասում.
—Լա՛ւ, որ գնամ խոտ հնձեմ, բա ինչո՞վ բերեմ, սայլ չունեմ, ձի չունեմ, մենակ մի կատու ունեմ։



—Է՛, ինչ ուզում է լինի,—ասում է Աթօն,—լծեմ հատս՝ գնամ խոտի, խոտը բերեմ՝ կովս ուտի։
Լծեց հատը, գնաց խոտի, որ խոտ բերի կովը ուտի։
—Է՛հ, ինչ ուզում է լինի, ասում է Թաթօն, լծեմ կատուս՝ գնամ խոտի, խոտը բերեմ՝ կովս ուտի։
Լծեց կատուն, գնաց խոտի, որ խոտ բերի, կովը ուտի։

Գնում է Աթօն՝ շը՛խկ-թը՛խկ...
Գնում է Թաթօն՝ շը՛խկ-թը՛խկ...

—Ո՞ւր ես գնում, Աթօ,—հարցնում է Թաթօն.
—Խոտի...
—Ինչքի՞ղ է պէտք խոտը։
—Կովս ուտի...
—Ինչքի՞ղ է պէտք կովը։
—Կաթը տայ։
—Ինչքի՞ղ է պէտք կաթը։
—Երեխէքս ուտեն։
—Է՛հ, հատով ինչքա՞ն խոտ ես բերելու, Աթօ։
—Ինչքան բերի-բերի, Թաթօ։
—Ես էլ եմ գալիս խոտի։

Գնում է Աթօն՝ շըխկ-թըխկ…
Գնում է Թաթօն՝ շըխկ-թըխկ…



Գնում են, գնում, հասնում խոտատեղ: Խոտը հնձում են, հաւաքում, գէզ են գնում ու քիչ-քիչ կրում են տուն Աթօն իր հաւով, Թաթօն իր կաուով: Կրում են ու տալիս իրենց կովերին:

Որ տալիս են փաթիլ-փաթիլ, կաթն են կթում կաթիլ-կաթիլ…
Որ տալիս են խոխո-խոխո՝ կաթն են կթում կովկիթ-կովկիթ…

Ինչպիսի մարդիկ էին Աթօն ու Թաթօն

Ա. ո ա ծ.—Գլուխց խուփը, գոտ պուտուկը:

---

88. Ձորս եղանակ

Թէ գարուն է նաշ-նաշխուն,
Նա ինչքա՞ր է մեզ բաշխում:
—Ծիլ ու ծաղիկ, կանաչ խոտ,
ալ ու ալեան վարդ շաղոտ:
Թէ ամառ է, շոգ ամառ,
ինչ է բերում մեզ համար:
Ցորեն, գարի ու հաճար,
ամեն հոգսի դեղ ու ճար:
Թէ աշունն է պտղաբեր,
ինչ է բերում մեզ նէյեր:
—Նուռ, սերկևիլ, տանձ, խնձոր,
դեղձ ու խաղող մեղրածոր:
Թէ ձմեռ է ցրտաշունչ,
ինչ է թափում լուռ ու՝ մունջ,
Փաթիլ, փաթիլ փափուկ ձիւն՝—
արծաթի պէս պապղունն:

1. Տարին քանի եղանակ, քանի ամիս ունի:

2. Որ եղանակն ու որ ամիսն է ձեզ դուր գալիս:

Ա. ո ա ծ,—կը գայ ...արին՝ հետը բարին:

ՎԵՐՋ

Ռեսպուբլիկական Գրադարան
ՀԱՍՀ-ի ԿԱ
Ա. Ըն. Ա. Մանուկյան
Ա. ՍՍՌՄ-ի ՀԱԿ

ՑԱՆԿ

I.

Ձհռաղիը այբբենարան . . . . . 3—28
Տպագիր վարժութիւններ . . . . . 29—38
Այբուբեն 39
Մեծատառ այբուբեն 40

II. ՋՄԵՌ

	Երես		Երես
1. *Մեր դպրոցը (ոտ.)	41	12. *Անուշ մայրիկը	46
2. *կաչաղակը	»	13. Ծիտ (Ադ…)	»
3. *Արշալոյսը (ոտ.)	»	14. Ո՞ւր գնամ (Ժողովրդ.)	»
4. *Բարի նապիկը	42	15. Տիկնի պսակ (մանկ. խաղ.) . .	47
5. *Առաւօտ (ոտ.)	»	16. *Ե՞ս… (առակ)	48
6. *Ձմեռ	»	17. Ինչ եմ ուզում (Ոտ.) Աշակերտ.	49
7. Ե՞րբ է լինում (ոտ.)	43	18. *Մուկիկը (ոտ.)	»
8. * Վահանի ձիերը	»	19. *Կան պալատիկը. հէքեաթ . .	50
9. *Մարգօն	44	20. *Արծիւկը	52
10. *Ձմեռ	»	21. Հովանոցի տակ	»
11. *Տատիկը աղէսը (ոտ.) . . .	45		

III ԳԱՐՈՒՆ

22. Գարնանը (ոտ.) Ցավհ. Թուժ. .	53	34. *Ինչն է լաւը	57
23. *Ձագուկները	»	35. *Վարսիկի կատուները	58
24 Ծիտիկի (օրօրը)	»	36. *կատու (ոտ.)	58
25. *Ե՞րբ է լինում (ոտ.)	54	37. *Կուկուլիկու (Ժող.)	»
26. *Աբագիներ	»	38. Սեւ կատուն. Էջ	59
27. Լաչ-լաչօ (Ժող.) Գ. Սրուանձտեան	55	39. *Բոյր ու եղբայր (ոտ.) . . .	»
28. *Մեղուն ու թիթեռը	»	40. *Մժեղ	60
29. *Մեղու (ոտ.)	»	41. *Ծաղիկնեը (ոտ.)	»
30. *Նաղաստաակներ. Պ. Պուշման .	56	42. *Գոչատ հաւը (Ժող.)	»
31. *Փնջիկ կովը (ոտ.)	»	43. Ծաի հարսնիք (ատան.) Դ. Դեմիրճեան	61
32. Ծովն ու Ջուրը	57	44. *Էն ով է (Ժող)	»
33. *Մայիս (ոտ.)	»		

Ծանօթ.—1) Աստղանիշ յօդուածներն ու ոտանաւորները խմբագրել և կամ փոխադրել են գիրք կազմողները:
2) Շաղատառ վերնագիր կրող յօդուածները ձեռագիր են՝ արտագրութեան համար:

IV. ԱՄԱՌ

	Էջ
45. *Երբ է լինում (առ.)	62
46. *Նանի հաւերը	»
47. *Սուլթան աքլորը	63
48. *Ծիտիկ (առ.)	»
49. Ախբան Հուռին. (ժող.) Յավ. Թում.	64
50. *Ո՛չ ոք (ժող.)	»
51. Փխսիկի գանգատը (առ.) Յավ. Թում.	65
52. *Փեսի բաժինը (առ.)	66
53. Ծիծեռնակ. Դոգոխեանի	»
54. Ջուխտ ու կենա- (Հատ.)	»
55. Քնած են. Սիմակի	67
56. *Մեր վառիկը (առ.)	»
57. *Մայրը	68
58. Ոսկի ձուիկ	»
59. Ջուչիկը Ա. Իսահակեանի	69
60. *Լուսին (առ.)	»
61. *Չիաւորնիկ	70
62. *Անձրև	»
63. *Հերոսը	71
64. *Բիւրեղ	»
65. *Ծիտիկնիկի կռիւը	72
66. Գառնուկ. Շիրվանզադէ	73
67. *Նապաստակը	»
68. Ճախարակ (առ.) Յար. Թում.	74
69. Ընձգուկն ու գիզճանիկը Վ. Փափազեանի	»
70. *Հայրիկի պէս	75
71. Մեր սիուկը. Լէօ	76
72. *Արև	»
73. Սիրուն թռչուննիկ	»

V. ԱՇՈՒՆ

	Էջ
74. *Ե՞րբ է լինում	77
75. Սրամիտ Եւան Նար.-Դաս	»
76. Շնաբարշը վարպետ	78
77. Ծիտիկն ու մուկիկը Յավ. Թում.	79
78. *Փայտիրը (առ.)	»
79. *Տերեւ	80
80. *Բաղցածը (ժող.)	»
81. *Աչխատանք	»
82. *Որը գոհինիկ	81
83. *Խոզը	»
84. *Հազար աղուէսը	82
85. *Քեզ էլ չի մնայ (հէքեաթ)	»
86. *Խորամանկ աղուէսը (հէքեաթ)	84
87. *Աքօն ու Թաքօն (հէքեաթ)	85
88. *Ձորս եղանակ (առ.)	86

VI. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԱԾՔԸ

	Էջ
1. Մեղրահաց	34
2. Տխիլ (ակողին)	35
3. Դղում	»
4. Մուկն ու իր բոլնը	42
5. Մաղ	»
6. Գլխարկը	44
7. Գդալ	46
8. Գուլպայ գործելու ձողիկը	»
9. Ծուխ	52
10. Վազող ջուրը	53
11. Ձկնորս ու ձուկ	53
12. Ծուխն ու կրակը	54
13. Ջուր	59
14. Ջու	67
15. Լուսին	69
16. Ճախարակի վիլան	70
17. Մկրատ	71
18. Փշատ	76
19. Սեղան	77
20. Ձի ու ձիաւոր	79
21. Կաղամբ	81

Ծանօթ.—Ներկայիս դպրոցում, 1915—16 ուս. թւին տեղի ունեցած Թիֆ. ծխ. դպրոցներում հայոց լեզու աւանդող ուսուցիչ-ուսուցչուհիների ժողովներում ընդունած դասագրքերին վերաբերող որոշումների համեմատ՝ աշխատել ենք բարեփոխել դրքիս երրորդ տպագրութիւնն ևս՝ ի միջի այլոց և հետեւեալ կերպով.—**Նախ**՝ այս տպագրութիւնից հանել ենք այն յօդուածները, որոնք նկատել ենք մանուկների համար անհետաքրքիր ու անարժէք և փոխարէնը տեղ ենք տւել աւելի իմաստալից յօդուածների՝ Հովանոցի տակ, Շաւարշը վարպետ, Ծիտիկների կռիւը և այլն. **Երկրորդ**՝ տեղ տալով մանկական ոտանաւորների, աւելացրել ենք դուս մանկական խաղեր ևս՝ Տիկնի պատկ, Ջուխտ ու կենա, Հայրիկի պէս և այլն. և **Երրորդ**՝ աւելի կանոնաւորելով յօդուածների ներքին դասաւորութիւնը՝ ծանօթից անծանօթ, մօտիկից հեռուն՝ հարստացրել ենք երկու նոր հէքեաթով՝ Քեզ էլ չի մնայ, Խորամանկ աղուէսը։ Այս ամենի համար դասագրքին աւելացրել ենք 8 նոր էջ։

Կազմող Եր

H A PM 4-30

Ընտրած է Հայոց գրերի գիտի 1500-ամեակի եւ տպագրութեան 400-ամեակի տարեդարձին

Մի խումբ ուսուցիչների կազմած դասագրքերից բարեվոխած տպագրութեամբ լույս են տեսել

I

ՄԵՐ ԴՊՐՈՑԸ, *Հայոց լեզվի Ա. տարւայ նոր դասագիրքը պատկեր ընթերցարան, արտագրութեան ձեռագիր օրինակներով* 30 *կ.*
(Գտնւում «ՆՈՐ-ԿԵԱՆՔ» գրավաճառանոցում.)

II

ՄԵՐ ԴՊՐՈՑԸ, *Հայոց լեզվի Բ. տարւայ նոր դասագիրք, պատկերազարդ ընթերցարան, ուղղագրական ձեռագիր օրինակներով և իրաքննական պատկերներով . . . . 45 կ.*

III

ՄԵՐ ԴՊՐՈՑԸ, *Հայոց լեզվի Գ. տարւայ նոր դասագիրք, ուղղագրական ձեռագիր օրինակներ, շարադրութեան պատկերներ, փոխադրութեան նիւթեր և բառարան, (Հրատարակել է ուսուցիչների մի նոր խմբակցութիւն) . . . . . 60 կ.*

ԴԱՍԱԳԻՐՔ ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ, *Գ. տարւոյ, ծննդավայր, մերձաւոր բնագիտութիւն և հողվածք . . . . . 35 կ.*
(Գտնւում «ԳԻՐ» գրավաճառանոցում)

Գ Ի Ն Ն Լ՝ 30 ԿՈՊ.

ՀԵՏՋՀԵՏԷ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ

1) *«ՄԵՐ ԴՊՐՈՑԻ» չորրորդ տարին*
(Գրքի ամբողջ նիւթը նորութիւն է, բազմաթիւ նկարներով, ուղղագրական ձեռագիր օրինակներով, շարադրական մշակուած նիւթերով, ճոխ բառարանով և հայ գրողների նկարներով ու կենսագրականներով)
2) *Հայրենագիտութիւն՝ «Գ» տարւոյ պատմական մասը.*
3) *ԳԵՂԱԳԻՐ ուղղագրութեան ձեռագիր պատկերազարդ օրինակներ, երկու մասով.*
4) *Հայրենագիտութեան դասագիրք, Գ. ա. Երևանի նահանգի, և*
5) *Հայրենագիտութեան դասագիրք, Գ. ա. Գանձակի նահանգի։*

2013
4052

00809007N
ՀՀ ԿԳՄՍ գրադարան
ՀՀ ԿԳՄՍ գրադարան

HL Apm
4-301a